

կանօսարացնեմք զայն, կտեսնեմք որ աղանույն զուարթութիւնը կերբայ, կրմբի, եւ եթէ քիչ մըն ալ օղը պարպեմք, բոլորովին խեղճը կիյնայ կանշնջանայ : Ուրեմն այս փորձէն յայտնի երեւի որ անօսարացեալ օղոյն մէջ կենդանեաց պէս մարդս ալ նեղութիւն կրաշէ. եւ երկրորդ, առանց օղի ոչ մարդ, ոչ կենդանի չեն կրնար ապրիլ :

Իրաւ է որ բռնունք այնչափ կբարձրանան ուր օղը շատ աւելի նօսք է քան թէ երկրիս վրայ եւ բնաւ նեղութիւն չեն կրեր, բայց կազմութեանն այնպէս եղած է որ անդադար կարող են օղին հետ իրենց ներքին հեղանիւքքը հաւասարակշռել : Օղը միայն իրենց բոքը ջմտնէր. գանձական խոռոչնին (cavité abdominale) ու. հետեւ ոսկորնին լեցուն են օղով. եւ մրնուորտին մէջ իրենց բարձրանալուն կամ ցածնալուն համեմատ՝ կրնան շնչառութեամբ լեցընել կամ պակսեցընել օղային խորշերը :

Անօսարացեալ օղը շնչառութեան եւ արեան շրջանին գործարանաց գործողութիւնը երազելով՝ գտնոք աւելի ենթակայ կընէ բոքբորման, որով տկար կուրծք ունեցող անձինք մեծ վտանգի մէջ կիյնան. թպէտեւ երբեմն կասկածաւոր կուրծք ունեցող հիւանդներն եւս լեռներու մէջ անվնաս բնակած են :

Շատ տաք մրնուորտին մէջ մարդուս բոլոր գործարանները ուժէ կիյնան, մտաւոր ու բարոյական կարողութիւնքը կտկարանան : Նրովպիոյ հրատոջոր երկնքին տակ մարդուս մարմնոյն պէս միտրն եւս շլատած է, որ ընդհակառակն այնչափ տաք չեղած կլիմաներուն մէջ — որպիսի են Նարպիոյ հարաւային կողմի երկիրները — նորէն իւր եռանդն ու կորովը նեղք կբերէ :

Շատ ցուրտ կլիմաներն եւս շատ տաք կլիմաներուն պէս մարդուս մտքին վնասակար են :

Տաք ու ճախճախոտ երկիրներ՝ ուր մեռած բուսական նիւթեր տաքին ու խոնաւութեան ճգուած են, մանաւանդ մեծամեծ գետերու բերանը, բազմաթիւ հեղեղատներ ընդունող ծոցերուն ցամաքը, վերջապէս ուր որ անուշ ջրեր կուգան աղի ջրերու հետ կխառնուին՝ երկրին օղը ոչ երբեք առողջարար կըլլայ :

Արեւադարձից տակը այսպիսի երկիրներ շատ կան, եւ դիտուած է որ անձրեւներէն ետքը երբոր գետինը կսկսի չորնալ, այն ժամանակ վատառողջութիւնը կսկսի : Քոյոմպիոյ Սանթա-Ֆէ տէ Պոկորա ըսուած մայրաքաղաքին արեւելակողմը Սուրբ Մարտինոսի ընդարձակ դաշտեր կան, ուր ամեն տարի անձրեւային եղանակէն ետքը մեկէն ջերմերը կսկսին. եւ այն ժամանակ բաւական է թէ լեռնաբնակներէն մեկը դաշտը իջնայ՝ մեկէն կնիւանդանայ :

Օղոյն ունեցած էլէկտրականութիւնն ու մէջէն անցած լուսոյ ճառագայրները՝ կենդանի հակաց վրայ մեծ ազդեցութիւն ունին : Թէ մարդիկ եւ թէ բոյսք արեւուն ճառագայրներէն զրկուելուն պէս կճոգին ու բոռմին : Քաջաբոյս տունկ մը առ, տեղ մը դիր ուր արեւուն ճառագայրները չգարնեն, կըտեսնես որ ինչպէս քանի մը օրուան մէջ առջի պայծառ կենդանութիւնը կերբայ ու կչորնայ :

Վերջացընեմք հատուածնիս ըսելով որ օղը բնութեան երեւոյթներէն շատին վրայ մեծ ազդեցութիւն ունի. ինքը կուտայ մեզի քրքմահանդերձ՝ վարդամտն ու կապուտակագեղ արշալոյսը, քաղցրասիւք ու կարմրավառ վերջալոյսը, երվներանգ ծխածանն ու երեկոյեան քաղցրաբոյր գեփիւռները :

ՈՐԲԱՆ ԻՄ ԵՒ ՏԱՊԱՆ.

Որբան իմ... հն ոչ եւս է ինձ. այլ իւրն ուշ
Դրախտածառայ գերդ գարնան սիւքն է անուշ.
Ի դոյն՝ յորժամ կենաց զինեւ հոծի մութ՝
Առ գայ իլոյս յայգն իմ սըրտիս առնեմ մուտ :

Տապան... չուրմի դեռ եւս, այլ ինձ տացի ուայն.
Չիր ճոխութիւն քան զայն անշուշտ եւ անջան.
Ըզմին՝ ունիմք երբ մեր դեռ ոչ ինչ այլ կայ,
Յայնժամ եւ գմիւսն երբ ունել ոչ ինչ մընայ :

Մին որպէս միւս հանգըստոցի տըւան կայր.
Անդ հանդերձիմք յոր անգիտակն էմք՝ կեանք... վնայր.
Եւ աստ ըզխոնջ արկանեմք քայլս ի յանդարր՝
Ի ստուերն առնուլ շունչ՝ ի միւս ռան ուղեւոր :

Որբան՝ ի վարդ երկինս ունի գեղաշուրջ,
Եւ յոսկեփայլ զըրզի երազս եւ անուրջ.
Թեւ ուղեկից զուարթնոյն ի նա նովանի.
Եւ մայրենին յերգ բուն անոյշ հեղանի :

Տապան՝ գերկինս եւ ինքն ունի զամաշանյն.
Պըսակ ծաղկանց շուք հեշտաբոյր եւ ըզմոյն.
Նրգ՝ ըզբզգիւն որդան կամ ճիւղ ճընճըղկին,
Հըսկող ըզվեմ մի, գերկնասույց կամ նոճին :

Են երկոցուն եւս արտասուք, ժըպտից գեղ.
Երբեմն քաղցր, երբեմն աղի, ցոյ կամ տեղ.
Առ երկորումք եւս են աղօթք, ուխտ եւ յոյս,
Եւ երկորին ճըգեն յերկինս մեր գաջիւնս :

Նինջ անուշակ ունի փափկիկն որորան,
Ըզնինջ ունի զիւր անկէտ ինքն իսկ տապան.
Յարշաւուսոյն անդ բանին բիբբ ի փայլել,
Եւ աստ՝ փակին յայլ իմն ալգուն ջհանգութէլ :

Յորբան բողոսմբ ըզխանճարուս Եւ ըզբարճ .
Եւ սըրտարինդ վազեմբ յողշոյնըս կեմաց .
Ուի տապանի բողցուր մարմին Եւ ըզյող,
Ո՛հ, ի զիշէր... քէ վարդավառ յառաւօտ :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Ա.

Մեր Աղանին իւր առաջին, երկրորդ Եւ երրորդ տարւոյն ընթացիցը մեջ բեպէտ շատ նիւքերու վրայ խօսեցաւ, բայց ծամանակ չգտաւ. Բնական պատմութիւն կամ Բնապատմութիւնը ըստած նարկաւոր գիտութեան վրայ ընդարձակ տեղեկութիւններ տալու. այսուհետեւ կ'ստատանայ իւր ընթերցողացը այս օգտակար ու միանգամայն զուարճալի գիտութեան վրայ երկարօրէն ու ստեպ խօսելու. Եւ որպէս զի ընթերցողք Եւս սիրով կարդան ու միտք պահեն, պիտի ջանայ իրենց չորս դին պատած զարմանալիքը մեկնելով՝ այն մեծ գիտութեան վրայ նետաքրքրութիւններն վառել, բնութեան մեծութիւնը, նարստութիւնն ու գեղեցկութիւնը ճանչցնել, ու սրտերուն մեջ բոբբութիւն այն նրաշալի բնութեան Ստեղծողին վրայ զարմանք, սէր ու մեծարանք :

Յիրաւի մեծ անօր է մարդուս որ բոլորտիքն եղած գեղեցիկ ու զարմանալի բաները չգիտնայ, անոնց պատճառը չհասկընայ : Ինքը որ արարածոց քաղաւորն է, միքէ պէտք չէ որ իւր իշխանութիւնը՝ ինքզինքը ճանչնայ : Կրնայ օտարի մը պէս անցնիլ ու անտարբէր աչքով նայիլ այն նիւանալի պալատին վրայ զոր Աստուծոյ ձեռքն իրեն համար կառուցեր է :

Բարեկիւրր դաստիարակութեան գլխաւոր նիւանց մեկը պէտք է ըլլան բնական գիտութիւնները. Եւ յիրաւի, վասն զի բնութեան ուսմամբն է միայն որ կրօնը, բարոյականը, ողջմտութիւնը, պարզ ու պարկեշտ ախորժակները կրնան մարդուս սրտին մեջ հաստատուիլ : Այս բողոսնք. զբօսանք ու զուարճութիւն սիրողին համար Եւս միքէ տիեզերաց տեսարանն աւելի ազնուական ու անտրտում ուրախութեանց յորդառատ աղբիւր կրնայ գտնուիլ :

Այս բանիս համոզուելու համար բաւական է որ աչքերնիս մեկ մը աշխարհիս վրայ դարձնեմք : Որպիսի նրաշանկար պատկեր : Լուսանշոյլ աստղերը կապուտակ պալատի մը մեջ հանդիսի համար ծողվուած փառաւոր կոջնականաց պէս երկնից կամարին վրայ նեղարայլ կշիռն կրաւալին : Ովկիանոսը մերթ խաղաղաւետ՝ մամուսպատ ու ժայռայից յատակին նորածին տղու մը պէս կնչէ, Եւ մերթ ալեւատտ՝ վրայ

հասած բշնամույն դեմ համագունդ գէնք առնելու վազող ազգի պէս անեղաճայն կզոռայ : Երկիրս սիրով ու երախտագիտութեամբ կնայի արեւուն վրայ որ կանաչագարդ դալարիբը իրեն վերարկու կդրկէ, Եւ գեղեցկագոյն ծաղկըները պսակ : Կենդանիք իրենց հասարակապետութեանց օրինօքը, ճարտարութեան բնական ազդեցութեամբն ու այլ Եւ այլ բնաւորութեամբն ու սովորութեամբքը՝ օղը, ջրերն ու դաշտերը կզարդարեն : Հողագնտոյս խորունկէն մինչեւ երկնքի ծայրը զօրաւոր ելեկտրական շղթայ մը երկնցած՝ բոլոր եակները իրարու հետ կկապէ. յուսնին աղօտ լուսոյն տակ ծովը կողողոջէ, Եւ մինչեւ նեռաւոր աստեղաց ծանրութիւնը աւազին հատիկը կզգայ : Ամեն բան կենդանութիւն ունի, ամեն բան կփայլի, կծաղկի ու սրանչելի ներդաշնակութեան մը մեջ է. ամեն բան մշտամուսնջ ու յայտնաբարբառ երգերով Արարչին կատարելութիւնները կնօջակէ : Ով որ աչք ունի՝ պէտք է տեսնէ այս բաներս, խելք ունեցողը պէտք է հասկընայ, ճայն ունեցողը պէտք է օրհնէ :

Բայց աւելի մօտեն զննենք այս նրաշաղան անբիւն հանամար եակները : Վասն զի անկշռելի նուրբ ու զօրեղ հեղանիւրներն որ աշխարհաց հաւաասարակչութիւնը կպահեն, անգործարան գոյացութիւններ՝ որ հողագնտոյս ընդերքէն կելլեն ու երեսին վրայ կտարածուին, երկրիս վրայ սփռուած կանաչագեղ՝ ծաղկաւետ ու պտղաւետ տունկերը, կենդանի արարածները՝ կենդանաբուսէն սկսեալ մինչեւ ի մարդս որ բնութեան քաղաւորն է ու քանանայ, կարժեն որ բնենմբ սովորիմք ու հասկընամք, վասն զի լի են մեծութեամբ ու գեղեցկութեամբ :

Այսպէս անա մրնոյրտը սոսկալի զինարան մի է՝ յորում աստուածային իմաստութիւնն ու ամենակարողութիւնը դրեր է ու կպահէ ելեկտրականութիւնը, մագնիսականութիւնը, ջերմութիւնը, լոյսը, այսզօրութիւնները կըսեմ որ նախախնամութեան ձեռքը մէյմեկ գործիք են, ու ասոնցմով ամենայն կենդանի ու անկենդան եակները կարբընցընէ, կվառէ, հոգի կուտայ, կծաղկեցընէ ու կբազմացընէ : Մրնոյրտը հայելի մի է որ մեր աչքին լուսոյ ճառագայրները կերեւցընէ. այնպիսի միջնորդ մի է որով ականջնիս արարածոց ճայները կլսեն, առուակի մը խոխոջանքէն մինչեւ որոտման շառսջմունքը, մինչեւ